«Արտյոմ Ոսկանյան» ԱՁ
Հեռ. (044) 87 59 41
Հ/հ 1570004505915000
“Ամերիաբանկ” ՓԲԸ
ՀՎՀՀ 26778044

«Artyom Voskanyan» IE
Tel. (044) 87 59 41
S/A 1570004505915000
“Ameriabank” CJSC
TIN 26778044

Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության
Պետ. լիցենզիա ՔՊԼ-002374 տրված 11.12.2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-002374, 2-րդ դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

ՏՐՎԱԾ Է

2024-12-11, ԱՐՏՅՈՄ ՈՍԿԱՆՅԱՆ Ա/Ձ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ՉԱՐԵՆՑ ԹՂՄ., 13, 8 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 11.12.2029թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց թիվ 1/1 շենքին հարակից տարածքում գտնվող ավտոտնակի տեխնիկական վիճակի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2025

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«Արտյոմ Ոսկանյան» ԱՁ

տնօրեն _____ Ա. Ոսկանյան

«23» _____06_____2025թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց թիվ 1/1 շենքին հարակից տարածքում գտնվող ավտոտնակի տեխնիկական վիճակի վերաբերյալ

Սույն եզրակացությունը տրվում է համաձայն «Արտյոմ Ոսկանյան» ԱՁ-ի և ՀՀ քաղաքացի Մխիթար Կարապետյանի միջև 19.06.2025թ. կնքված թիվ Ե-113/25 պայմանագրի:

Եզրակացություն տալու նպատակով «Արտյոմ Ոսկանյան» ԱՁ-ի կողմից (Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության Պետ. լիցենզիա ՔՊԼ-002374 տրված 11.12.2024թ.) կատարվել է ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց թիվ 1/1 շենքին հարակից տարածքում գտնվող ավտոտնակի (այսուհետ շենք, շինություն) ակնադիտական հետազննություն, չափագրման ու լուսանկարման աշխատանքներ:

Շինության ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումները.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց թիվ 1/1 շենքին հարակից տարածքում գտնվող ավտոտնակը մեկ հարկանի 4.39x6.90մ եզրային եզրաչափերի ուղանկյունաձև հատակագծով կառույց է: Այն կառուցվել է 1980-ական թվականներին: Շինությունը ունի 2.7մ հարկի բարձրություն (հարկի բարձրությունը դիտվել է հատակից մինչև ծածկի վերին նիշի բարձրությունը), առավելագույն բարձրությունը մոտ 3.5մ է Շինության հատակի նիշը բարձր է սալվածքի նիշից մոտ 5-10սմ-ով: Շինությունը գտնվում է մեղմ թեքությամբ տեղանքում:

Նկ. 1 Շինության ճակատային տեսքը

Շինության կոնստրուկտիվ լուծումը տրված է կրող երկայնական ու կապող լայնական պատերով և վերնածածկի հորիզոնական կոշտ սկավառակներով:

Շինության կոնստրուկտիվ տարրերն ունեն հետևյալ բնութագրերը.

- Հիմքերը - ժապավենային են, փոխուղղահայաց ուղղություններով խաչահատվող, իրականացված է խամքարաբետոնից;
- Պատերն - իրականացված են կանոնավոր կտրվածքի տուֆաքարերի շարվածքով ցեմենտավազային շաղախի կիրառմամբ և ունեն 20սմ հաստություն:
- Ծածկերը – իրականացված են միաձույլ ե/բ-ով;
- Տանիքը միաթեք է՝ արտաքին անկազմակերպ ջրահեռացմամբ: Իրականացված է մետաղե ծպեղնային ու կավարամածային կոնստրուկցիաներից և ծածկված է ցինկապատ պողպատե ալիքավոր թերթերով;
- Սալվածքն բետոնից է:

Շենքի երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնի ամրության որոշումը գործիքային եղանակով

Ակնաղիտական և կարծրաչափի միջոցով հետազոտումից պարզվեց, որ շենքի շինարարական կոնստրուկցիաներում չկան մանր ճաքեր, դեֆորմացիաներ, տեղապտույտներ:

Ե/բ կոնստրուկցիաների բետոնի փաստացի ամրությունը որոշվել է չքայքայող եղանակով՝ «Շմիդտ-Համեր» սկլերոմետրի միջոցով (գործարանային համարը՝ 2P0003), ՀՀ տարածքում գործող ՀՍՏ ԵՆ 12504-2-2013 «Կոնստրուկցիաներում բետոնի փորձարկում. Մաս 2. Չքայքայող փորձարկումներ. Առաձգական հետդարձի չափի որոշում» ստանդարտի պահանջներին համապատասխան: Չափումներն իրականացվել են շենքի կրող ե/բ կոնստրուկցիաների վրա, շենքի տարբեր առանցքներով (տես նկ. 2):

Ամփոփելով շենքի ե/բ կոնստրուկցիաների բետոնի փաստացի սեղմման ամրության որոշված արժեքները ստացել ենք.

երկաթբետոնե կոնստրուկցիաների իրականացված բետոնի սեղմման ամրության արժեքներն ընկած են 24-26ՄՊա սահմաններում, որը մոտավորապես համապատասխանում է B20 դասի բետոնին և համարվում է բավարար ցուցանիշ այդ կոնստրուկցիաների համար:

Մետաղական ամրանների առկայությունը ստուգվեց PS-35 Ֆերոդետեկտորի միջոցով:

Նկ. 2 Բետոնի փաստացի ամրության որոշման դրվագ

Հիմվելով հետազննության արդյունքներին եզրակացնում ենք.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց թիվ 1/1 շենքին հարակից տարածքում գտնվող շինության կոնստրուկտիվ տարրերի վնասվածքներ, ձևախախտումներ, ճաքեր չկան: Շինության պատերի, ծածկի, տանիքի տեխնիկական վիճակը բավարար է: Բացակայում են հիմքերի անհավասարաչափ

դեֆորմացիաների նշաններ: Շինության ընդհանուր կոնստրուկտիվ համակարգում չկան դրա շահագործման հուսալիության վրա ազդող վնասվածքներ ու թերություններ:

2. Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 08.12.2009թ. թիվ 282-Ն և 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված հավելված N 1-ի՝ «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումների», ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարդենիս, Վարդենիս ք. Լեռնագործների փողոց թիվ 1/1 շենքին հարակից տարածքում գտնվող շինության տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար (2-րդ աստիճան):

3. Շենքը ենթակա է շահագործման:

Կատարող՝

«Արտյոմ Ոսկանյան» ԱՁ

գլխավոր ճարտարագետ, Ա. Ոսկանյան